



21.09.2011

Անկախության 20-րդ տարեդարձին՝ 2011թ. սեպտեմբերի 21-ին ժամը 15:00-ին հանրապետության երիտասարդ հեծանվորդների շարայունը Երևանի քաղաքապետարանից մայրաքաղաքի բնօրրան՝ Էրեբունի ամրոց հասցրեց Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի խորհրդանիշը՝ Երևանի դրոշը: Դրոշը արգելոց-թանգարանի տնօրեն Գ. Գյուրջյանին հանձնեց Հեծանվավազքի աշխարհի առաջնության կրկնակի արծաթե մեդալակիր, Երևանի ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի 2-րդ կուրսի ուսանող Մհեր Մկրտչյանը: Մոտ առաջիկայում 20-ամյակի տոնակատարությունների շրջանակում արգելոց-թանգարանին ի պահ տրված Երևանի դրոշը արգելոց-թանգարանի դրոշի հետ միասին կծածանվի թանգարանի շենքին հարակից ծառազարդ պուրակում՝ խորհրդանշելով հնամենի ու նորօրյա մայրաքաղաքի հարատևությունը: